


շէ, և այն ալ՝ նոյնչափ ժամանակէ ետքը ուրիշի մը կ'անցունէ իշխանութիւնը, և այսպէս հետզհետէ, մինչև նոր ատենակալներ ընտրուին, ըստ օրինաց նախագրեալ կանոնաց և ժամանակի։ Առաջին և աւելի երկայն տեսող փոխարքայութիւնը հառությունի մահութենէն ետև հանդիպածն է, որ յաջորդաբար թագաւորութիւնը՝ տարուան մը չափ ազգատոհմէ ազգատոհմ անցաւ։ Պատրիկներուն շատ հաճոյ էր այն կառավարութեան կերպը՝ որով փոփոխակի մասնակից կ'ըլլային ծայրագոյն պատուայ. սակայն ժողովուրդը բազմաթիւ տէրերէ խնջ, բռնադատեց զանոնք վերջ մը գնելու իրենց դահակալութեանը՝ Տէրութեան դըրսի մը ընարելով։ Այս առօրեայ ատենակալութիւնն է միոյն որուն Ռամիկը մասնակից չեղան երեք. որոնք և խելացի փառասիրութեամբ մը վերջին ձիգն թափեցին տեական պատիւներ ստանալու, արհամարհելով զանոնք որ վայրկենաբար կը տեսէն։

Կը շարունակոի :

### Տըպիին :

ՈՒԵԺԻՆ Շրիտանիոյ զլիսաւոր քաղաքներէն մէկն ու Խուլանտիոյ մայրաքաղաքն է, Լիֆէյա գետին եզերացը վրայ կառուցուած, գեղազուարձ ու բարեյարմար զրիւք։ Լոնտրայէն 420 հազարամէդը բացակայ է, ընդ  $53^{\circ}, 21'$  հիւսիսային լայնութեան,  $8^{\circ} 38'$  արևմտեան երկայնութեան։ Լթոռ կը լին արքեալիսկոպոսութեանց, մին ուղղափառաց, միւսն անգլիական եկեղեցւոյ. Գետն Լիֆէյ որ քաղքին մէջէն ընթանալով զայն երկու մաս կը բաժնէ քաղքին բանուկ վաճառականութեանը մեծապէս ձեռնոտու է. իսկ գետափունքը փառաւոր Ճեմելիքներով զարդարուած են և եօթը հօյակապ առկայուն կամուրջներ երկու եզերքը կը միացընեն։ Լցտեղի ու տձեւ են հին թաղերու տուներն և ուղիները, իսկ նորաշէններն ազնիւ և բարեկարգ։ Այս նորաշէն ուղեաց մէջ ամենէն նըշանաւորն է Ակքուիլ-Պորիդ ըսուածը, որ 36 մէդր լայնութիւն և կէս մըղն երկայնութիւն ունի և մէջ տեղը ի յիշատակ՝ Ակքունի ծովակալի շքեղ արձան մը կայ կամնգնուած, 40 մէդր բարձրութեամբ։ Դամբուն ծայրը կը

միանայ | ային-ին-ծուրիդէլ զուարձամի պարտէզներուն հետ որ ամառուան գլխաւոր զբասարաններէն մէկն է. Այ դարձեալ ուրիշ գեղեցիկ Ճեմելիք մ'ալ Ֆինիքս-բալլը անուամբ՝ 7 մղնն ընդարձակութեամբ, ուր է նաև 210 ոտնաչափ բարձր Աւելլինկդըն դքսին յիշատակարանը։ Հասարակաց հրապարակներուն մէջ անուանի է Ա. Վտեփաննոսինը՝ որ Լուսոպիոյ գեղեցիկ ու ընդարձակներէն մէկը կը համարուի։ Բնդհանրապէս տները աղիւսաշէն են և հինգ՝ վեց ու ինչուան ութը յարկ ունին. քիչ քաղաք կայ Լուսոպիոյ մէջ որ Տըպիինի չափարակաց շէնքերու ու փառաւոր պալատներ ունենայ, այնպէս որ եթէ մէկն յարմար դրեէ մը զայն դիտէ, կարծէ թէ առաջին կարգի քաղաքներէն մէկուն մէջն է, և քան զլուտոն և քան զլուտիմալըրկ գեղեցիկ ու բարեձեւ է։ Լուսելի շէնքերու մէջ անուանիներն են մաքսատունը, որուն նմանը չկայ Լուսոպիոյ մէջ. դարձեալ ժողովատեղին վաճառականաց, թըղթատարներու իջւանները, գատաստանական ապարանները, դիւանատունը, քաղաքապէտին պալատը։ Տըպիին ուսումնական յառաջադիմութեց մէջ ալ Լուսոպիոյ երեսելի քաղաքներէն վար չիմար, շատ նշանաւոր մարզարաններ ունի, որոնց առաջինն է Արբորդութեան ըսուած համալսարանը որ կանգնուեցաւ 1591 և Աղիսաբէթ թագուհուոյն ինամօքը, և միշտ 2000 էն աւելի աշակերտ ունի. ասկէ զատ նշանաւոր են թագաւորական ակադէմիան, նկարչութեան, բժշկութեան, վիրաբուժութեան, և այլն. և արուեստից ու գիտութեանց յառաջադիմութեանն համար զանազան բարեգործական ընկերութիւններն։ Հարուստ և անուանի է դարձեալ բնական պատմութեան թանգարանը, որուն մօտ բուսաբանական ճոխ պարտէզ մ'ալ կայ։ Վործարաններուն մէջ անուանի են՝ մետաքսի, չուխայի, ծխախոտի, գլխարկի, շաքարի, գարեջուրի, ընդարձակ



### Տրպիին:

Հենքերը: Ա աճառականութիւնը շատ բանուկ է, և աս կողմանէ ալ Ինգլիոյ առաջին կարգի քաղաքներուն կրնայ հաւասարիլ, և զրեթէ ամէն տեսակ վաճառք և ձեռագործ գուրս կը խաւ լէ. և ներս մտածներն են զլսաւորացար ցորեն, բուրդ, ձարպ և այլն: Ի՞նչ ակիչը ըստ վերջին ընդհանուր աշխարհահամարին 310,000 կը համրուէին, և թէպէտ այսքան բազմութիւն ժողովրդեան քաղքին բանուկ վաճառականութիւնը յոտին կը բռնէ, բայց խոստովանելու է միանգամայն որ ռամիկ ժողովրդեան վիճակը վերջի աստիճանի խեղճ է և շատերն ՚ի յետին չքաւորութենէ սովլամահ՝ կը մեռնին: 25,000 հոգի միայն օրական պարենի կը կարօտին՝ ցաւալի տուայտութենէ նեղուելով. ուրիշ 25,000 ալ բանուոր կը համըւէին՝ որք նոյնպէս խեղճ կեանք մը կ'անցընէն: Ի յսպիսի գժբաղդ աղքատաց համար թէպէտ զանազան ընկերութիւններ կազմուած են, բայց հանգերձ այսու ողորմելեաց թիւը չինուազիր:

Իսաց ՚ի ուրիշ ուսումնական տեղերէ անուանի է նաև հասարակաց զրատունն, որուն մէջ 100,000էն աւելի զիրք կը գտնուի և մեծաւ մասամբ հընատիպ օրինակներ են:

Ը ատ հին քաղաք է Տըպլին, և Պտղոմէոսի աշխարհագրութեան մէջ կը յիշատակուի Խաղանա անուամբ, ինչպէսնաև ուրիշ տեղ ալ Տուպլանա՝ որ Խոլանտացի լեզուաւ ուաս լիճ կը նըշանակէ: Հենրիկոս Ի. Ինգլիոյ թագաւորին ժամանակը՝ (1154-1189) հին քաղաքը սկսաւ նորոգուիլ ու ընդարձակիլ և վաճառականութիւնը ծաղկիլ, և ուրիշ աշխարհաշէն թագաւորաց խնամօքը շատ պայծառացաւ: — Տըպլին շատ մը անուանի հանձարներու խանձարուկը եղած է. որոնց մէջ ամենէն նշանաւորն է քերդողն իմալ մաս-Ուր:

